Ազգ
Azg
7 ՓԵՏՐՈՒԱՐ 2013 ՀԻՆԳՇԱԲԹԻ 13(5096)
ISSN: 1829-1651

# Ստեփանակերտի օդանավակայանի գործարկման, Չիկագոյի կոնվենցիայի եւ հարակից հարցերի մասին

*Կամ՝ ձեզ եմ դիմում, պարոնայք համանախագահներ*

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

«Ադրբեջանը մտադիր չէ քաղաքացիական օդանավ կործանել», այս վերտառությամբ տեղեկատվություն տարածեցին ադրբեջանական, հայկական եւ միջազգային գրեթե բոլոր լրատվամիջոցները: Տոնայնության առումով դրանք տարբեր էին, հաճախ՝ հակոտնյա: Իսկ դրան հետեւեց այլ տեղեկություն՝ որ ԵՄ հատուկ բանագնաց Լեֆորը Բաքվում Իլհամ Ալիեւի հետ քննարկել է նաեւ «Լեռնային Ղարաբաղում օդանավակայանի շահագործման հետ կապված հարցը»:

Ի՞նչ հայտարարի են եկել բանակցող կողմերը կամ ի՞նչ տրամադրվածությամբ հրաժեշտ տվել միմյանց՝ չփորձենք գուշակել: Մեզ այլ հանգամանք է հետաքրքրում. առհասարակ ի՞նչ իրավական հիմքով է պաշտոնական Բաքուն սպառնում «թույլ չտալ» Ստեփանակերտի օդանավակայանի գործարկումը: Ադրբեջանցի պաշտոնյաներն իրենց երկրի «արդարացիությունը հիմնավորում են» Չիկագոյի կոնվենցիայի սկզբունքներով եւ նորմերով: Մենք կփորձենք «կարդալ» կոնվենցիան: Եվ այսպես.

ա. Կոնվենցիան կարգավորում է փոխադարձաբար միմյանց տարածքային ամբողջականությունը ճանաչած երկրների միջեւ քաղաքացիական օդագնացության հետ կապված հարաբերությունները եւ ոչ մի հղում չունի, թե Ադրբեջանի եւ ԼՂՀ ներկա չկարգավորված հարաբերություններին համանման պայմաններում ինչպես են կարգավորվում օդագնացության հետ կապված հարցերը:

բ. Փաստաթղթի պրեամբուլայում ասված է, որ «քաղաքացիական ավիացիայի ապագա զարգացումը կարող է էական չափով նպաստել պետությունների եւ ժողովուրդների միջեւ բարեկամության եւ փոխըմբռնման հաստատմանը եւ պահպանմանը»: Այսինքն, կոնվենցիան ապրիորի ունի պոզիտիվ կանխադրույթ: *Տես էջ 2*

# Նախագահի թեկնածու Ա. Ղուկասյանը առողջական խնդիրներ ունի, բայց կշարունակի հացադուլը



17-օրյա հացադուլից հետո նախագահի թեկնածու Անդրիաս Ղուկասյանի առողջական վիճակը երեկ երկու անգամ կտրուկ վատացել է: Նրա արյան զարկերակային ճնշումը իջել է 80/40-ի: Մեր այցելության ժամանակ Ղուկասյանը պառկած էր աչքերը փակ, գունատ:

Երեկվանից շտապ օգնության մեքենաները շուրջօրյա հերթապահություն են սահմանել եւ կիսկեն նախագահի թեկնածուին: Շտապ օգնության բժիշկը «**Ազգ**»-ի հարցին ի պատասխան ասաց, որ Ղուկասյանը ճնշման տատանման հետ կապված խնդիրներ ունի, եւ նրա առողջական վիճակը բնորոշ է 17 օր հացադուլի մեջ գտնվող մարդու վիճակին: Բժիշկները որեւէ կերպ չեն կարող միջամտել եւ ստիպել Ղուկասյանին դադարեցնել հացադուլը եւ գնալ հիվանդանոց:

Թեպետ քաղաքապետարանի առողջապահության վարչության պետն էլ երեկ այցելության ժամանակ խորհուրդ տվեց առողջությունն էլ ավելի չքայքայելու համար հրաժարվել հացադուլից, սակայն Ղուկասյանը մերժեց՝ հայտարարելով, որ հացադուլից կհրաժարվի միայն այն ժամանակ, երբ վերջ կտրվեն շինծու ընտրություններին:

Նրան այցելած կինը՝ Անահիտ Թարխանյանը, մեզ հետ զրուցել չցանկացավ: Նրա շտաբից ասում են, որ անգամ ընտանիքի անդամները չեն կարողացել համոզել վերջ տալ հացադուլին: Ղուկասյանի շտաբի համակարգող **Արմեն Գրիգորյանի** խոսքերով՝ իրենք չեն դիմի Սահմանադրական դատարան՝ պահանջով, որ թեկնածուներից մեկի համար ծագել են անհաղթահարելի խոչընդոտներ, քանի որ դա սուբյեկտիվ հարց է: Ավելի ուշ Ղուկասյանի շտաբից տեղեկացրին, որ երեկ հացադուլ հայտարարած թեկնածուն արյան հետազոտություն է անցել, որի արդյունքները ցույց են տալիս, որ հացադուլի ընթացքում հացադուլավորների վիճակը բնութագրող պաթոֆիզիոլոգիական շեղումները միանշանակ համապատասխանում են երկրորդ փուլին: Ղուկասյանի արյան հետազոտման տվյալներում արդեն որոշակի փոփոխություններ կան, որոնք վնասում են առողջությանը: Գիտակցելով այս ամենը՝ Ղուկասյանը շարունակում է պայքարել: Երեկ հացադուլ հայտարարած թեկնածուին են այցելել նախագահի թեկնածուներ Վարդան Սեդրակյանն ու Րաֆֆի Հովհաննիսյանը, առողջապահության փոխնախարար Վահան Պողոսյանը: «**Ազգ**»-ի հարցին՝ «Գիտությունների ազգային ակադեմիայից հաճա՞խ են հետաքրքրվում Ղուկասյանի առողջականով», շտաբի ներկայացուցիչներն ասացին՝ ոչ այնքան հաճախ:

Հ. Հ.

# Արամ Հարությունյանն այսօրվանից 24 ժամով հացադուլ կհայտարարի

«Ազգային համաձայնություն» կուսակցության առաջնորդ, նախագահի թեկնածու Արամ Հարությունյանը այսօր՝ ժամը 5-ին Կենտրոնական ընտրական հանձնաժողովի դիմաց 24-ժամյա հացադուլ կհայտարարի՝ նախագահի մյուս թեկնածուներին կոչելով փետրվարի 8-ին հանել իրենց թեկնածությունները ու գործող նախագահ, նախագահի թեկնածու Սերժ Սարգսյանին մենակ թողնել ընտրություններին:

«**Ազգ**» օրաթերթի հետ հեռախոսազրույցում նախագահի թեկնածուն ասաց. «Այստեղ կարեւորը հացադուլը չէ, քանի որ տեսնում ենք՝ Անդրիաս Ղուկասյանն արդեն 16 օր հացադուլ է անում եւ ոչ մի արդյունք: Ուղղակի այդ կերպ ես ցանկանում եմ նախագահի մյուս թեկնածուների ուշադրությունը հրավիրել խնդրին: Ես այսօրվանից նրանց կսպասեմ ԿԸՀ-ի դիմաց, որպեսզի փետրվարի 8-ին թեկնածությունը միասնական հանելու դիմումներ ներկայացնենք ԿԸՀ-ին», ասաց Հարությունյանը:

Հ. Հ.

# Նոր վարչապետի նշանակման հարց ՀՀԿ-ն դեռ չի քննարկել

ԵՐԵՎԱՆ, 6 ՓԵՏՐՎԱՐԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Հայաստանի Հանրապետական կուսակցությունն առաջիկա նախագահական ընտրություններից հետո ձեւավորվելիք նոր կառավարության ղեկավարի՝ ՀՀ վարչապետի հարցը դեռեւս չի քննարկել: «Արմենպրես»-ի հաղորդմամբ՝ Ազգային ժողովում լրագրողների հետ զրույցում ՀՀ վարչապետ **Տիգրան Սարգսյանը** լրագրողներին առաջարկեց զինվել համբերությամբ, սպասել ընտրությունների արդյունքներին: «Կարծում եմ՝ 5 տարի դիմացել եք, մի քանի ամիս էլ կդիմանաք», ասաց ՀՀ վարչապետը:

Անդրադառնալով «Բարգավաճ Հայաստան»-ի եւ ՀՅԴ-ի հետ նոր կոալիցիայի ձեւավորման հավանականության մասին հարցին՝ Տիգրան Սարգսյանը նշեց, որ ՀՀԿ-ն մշտապես ձգտում է ստեղծել համագործակցության միջավայր երկրի առջեւ ծառացած խնդիրները լուծելու համար:

«Այդ հիմքով էլ կոալիցիա էր ձեւավորվել, սակայն մեր գործընկերների մի մասն իրենց որոշմամբ դուրս եկան կոալիցիայից: Եթե մեր գործընկերները կայացնեն կոալիցիա կազմելու որոշում՝ հարցը կքննարկվի, բայց այդպիսի որոշում դեռ չկա», ասաց ՀՀ վարչապետը:

# Ինչպես է փոխվել անշարժ գույքի շուկան 2012-ի ընթացքում

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

**Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի՝ շուկայի վերլուծության տվյալների համաձայն, 2012-ին Հայաստանի անշարժ գույքի շուկայում օտարման գործարքների թիվը կազմել է 47014, որից առուվաճառքներինը կազմել է 76,7 տոկոսը: Մնացածը նվիրատվություններն ու փոխանակություններն են: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 39,5 տոկոսն արձանագրվել է Երեւան քաղաքում: 2012-ին անշարժ գույքի օտարման գործարքների քանակը 2011-ի համեմատ նվազել է 2,3 տոկոսով:**

**Մայրաքաղաքում 13944 առուվաճառքի գործարքների 59,5 տոկոսն արձանագրվել է բազմաբնակարան շենքերի բնակարանների նկատմամբ: 2011-ի համեմատ բնակարանների գործարքների քանակը Երեւանում 2012-ին նվազել է 9,1 տոկոսով:** *Տես էջ 8*

# Նախընտրական կոմիքս

***Այս համարի 4-րդ էջում ներկայացնում ենք Toto-ի Նախընտրական կոմիքսների 2-րդ շարքը: Նայեք եւ զվարճացեք:***




# ԱՄՆ-ում կեղծ վարկային քարտերով գողացել են 200 մլն դոլար



Նյու Յորքի, Նյու Ջերսիի, Փենսիլվանիայի եւ Կոնեկտիկուտի նահանգներում լայնածավալ գործողության շնորհիվ ձերբակալվել են մի հանցախմբի 13 անդամներ, որոնք մեղադրվում են կեղծ վարկային քարտերի միջոցով առնվազն 200 մլն դոլար գողանալու մեջ:

Հետաքննությունների դաշնային բյուրոյի (ՀԴԲ) եւ արդարադատության նախարարության համատեղ հայտարարության մեջ նշվում է, որ համացանցի ամերիկացի խարդախները հանցակիցներ են ունեցել ուրիշ երկրներում՝ Հնդկաստանում, Կանադայում, Չինաստանում, ԱՄԷ-ում, Պակիստանում, Ռումինիայում եւ Ճապոնիայում: ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ը նշում է, որ ցանցահենների գործողությունների հետեւանքով 10 տարվա ընթացքում տուժել են առնվազն 8 երկրի բնակիչներ:

ԱՄՆ իշխանությունների տվյալներով, չարագործները ստեղծել են ԱՄՆ քաղաքացիների ինքնության հազարավոր կեղծ վկայականներ, որոնցով գրանցել են 25 հազար բանկավարկային քարտ: Այդ քարտերով ստացվել են երբեք չվճարված խոշոր փոխառություններ, ինչպես նաեւ գնվել են զանազան ապրանքներ, մատուցվել են ծառայություններ:

Բացի դրանից, խարդախները ԱՄՆ-ում գրանցել են մի քանի կեղծ ոսկերչական ընկերություն, որոնք օգտագործվել են նրանց վարկային պատմությունների բարելավման նպատակով:

Եկամուտներով ձեռք են բերվել ավտոմեքենաներ, էլեկտրոնիկա, հագուստ եւ ոսկեղեն:

Հանցագործները ենթակա են մինչեւ 30 տարվա բանտարկության եւ միլիոնանոց տուգանքների:

# Մատչելի վարկեր ուսանողների համար

ՀՀ կառավարությունը եւ Հայաստանի բանկերը համատեղ նախաձեռնել են աննախադեպ վարկային ծրագիր, որի հիմնական շահառուները պետական, ինչպես նաեւ ոչ պետական բուհերի հավատարմագրված մասնագիտությունների բակալավրիատի եւ մագիստրատուրայի ուսանողներն են:

«Ուսումնական վարկը կտրամադրվի ՀՀ դրամով, ուսանողների ծնողների կամ խնամակալների երաշխավորությամբ, մինչեւ 10 տարի ժամկետով, որից ուսումնառության ընթացքում կմարվեն միայն տոկոսները (առավելագույնը` 4 տարի), իսկ ուսումնառության ավարտից հետո կկատարվեն վարկի մայր գումարի եւ տոկոսագումարների հավասարաչափ մարումներ», ասաց Հայաստանի բանկերի միության նախագահ **Աշոտ Օսիպյանը** երեկ ԿԳ նախարարությունում տեղի ունեցած ասուլիսի ժամանակ եւ ավելացրեց. «Վարկի առավելագույն ծավալը յուրաքանչյուր վարկառուի համար կկազմի 1 800 000 ՀՀ դրամ` կախված ուսման վարձի չափից: Վարկը կտրամադրվի 12 տոկոսով, որից պետությունը բոլոր շահառուների համար կսուբսիդավորի 2 տոկոսը, իսկ գերազանց առաջադիմություն ցուցաբերած ուսանողների համար` 3 տոկոսը: Վարկը կտրամադրվի անկանխիկ եղանակով. վարկի գումարը կփոխանցվի անմիջապես ուսումնական հաստատություններին»:



Ա. Օսիպյանը նշեց, որ բանկերի համար շատ կարեւոր է կրթության ոլորտը, որը միշտ ուշադրության կենտրոնում են պահում: Իսկ ներկա ծրագիրն իրականացվելու է 14 առեւտրային բանկերի միջոցով:

Կրթության եւ գիտության նախարար **Արմեն Աշոտյանն** էլ կարեւորեց բարձրագույն կրթություն ստանալու հնարավորությունները ընդլայնելու այս քայլը եւ ընդգծեց, որ մի շարք մասնավոր բանկերում ուսանողական վարկերի մատչելիության հետ կապված կային խնդիրներ, իսկ այս ծրագիրը առավել մատչելի է դարձնում ուսանողական վարկերի մեխանիզմը եւ հնարավորություն է տալիս ուսանողներին ստանալ բարձրագույն կրթություն. «Այս ծրագիրն առավել արդյունավետ է դարձնում բարձրագույն կրթության ծառայությունների մատուցումը բուհերի կողմից, ինչպես նաեւ զգալիորեն մեղմելու է սոցիալական խնդիրների պատճառով բարձրագույն կրթություն ստանալու խոչընդոտները: Կառավարությունը տարբեր մեխանիզմներ է կիրառում, որպեսզի լուծի բարձրագույն կրթության մատչելիության հարցը` որպես օրախնդիր եւ կարեւոր հարց»:

ԿԳ նախարարն ընդգծեց, որ այս համալիր գործողությունների արդյունքում լավ սովորող ուսանողները խնդիր չեն ունենա բարձրագույն կրթություն ստանալու:

ՄԱՆԱՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

ԿՐԱԿՈՑՆԵՐԸ ԱՐՁԱԳԱՆՔՎՈՒՄ ԵՆ

# Վարդան Սեդրակյանն ու Արամ Հարությունյանը Պարույր Հայրիկյանին մեղադրում են իշխանությունների հետ գործարք կնքելու մեջ

**Նախագահի թեկնածու, էպոսագետ Վարդան Սեդրակյանը համոզված է` մինչ նախագահի թեկնածու Պարույր Հայրիկյանի դեմ մահափորձը գործարք է տեղի ունեցել ԱԻՄ առաջնորդի եւ իշխանության միջեւ: Սեդրակյանը հիշում է Հայրիկյանի վերջին հարցազրույցը, որտեղ նա «մարգարեացել է»` հայտարարելով, որ եթե թեկնածուներից մեկի առջեւ անհաղթահարելի խոչընդոտներ են առաջանում, ուրեմն օրենքով պետք է ընտրությունները վերսկսվեն:**

**«Դրանից մի քանի ժամ հետո նա հարձակման է ենթարկվում, իսկ մի քանի օր հետո չի օգտվում իրավունքից: Թեեւ ասում է, որ կան անհաղթահարելի խոչընդոտներ, բայց չի օգտվում, գոնե ասեր` անհաղթահարելի չէ: Որեւէ միջին կետի վրա կանգ են առել իշխանությունն ու Պարույր Հայրիկյանը», ասաց Սեդրակյանը` հավելելով, որ կգա մի օր, երբ հանրապետականներից մեկը կգնա գործադիր մարմին, եւ Հայրիկյանին կտեսնենք պատգամավորի կարգավիճակում այնուհետեւ որեւէ պաշտոնում:**

**Էպոսագետը վստահ է, որ իշխանությունների հետ պայմանավորվածություններ ունեն նաեւ Րաֆֆի Հովհաննիսյանն ու Հրանտ Բագրատյանը: Սեդրակյանի խոսքերով` կատարվածը «դմբաթի» պես մի բան է Հայրիկյանի համար, եւ նա փորձել է օգտվել մահափորձից:**

**Նախագահի թեկնածու Արամ Հարությունյանն էլ վստահ է, որ Հայրիկյանի բերանով իշխանություններն են խոսում: Հարությունյանը վստահ է, որ մահափորձից հետո, երբ Հայրիկյանը մեղադրեց Ռուսաստանին, այդ երկրի հետ մեր հարաբերությունները կասկածի տակ դրվեցին: Նա խորհուրդ է տալիս Հայրիկյանին` հապշտապ ենթադրություններ չանել, իսկ գործող նախագահին` հրապարակավ հայտարարել, որ չի ընդունում Հայրիկյանի տեսակետը:**

**Հ. Հ.**

# Դեմկուսը կաջակցի գործող նախագահին

**Հայաստանի դեմոկրատական կուսակցության (ՀԴԿ) հանրապետական խորհրդի ընդլայնված նիստից հետո կուսակցությունը տարածել է հայտարարություն, որի մեջ ասվում է. «Գնահատելով նախընտրական ժամանակահատվածում երկրում առկա քաղաքական, տնտեսական, սոցիալական, բարոյահոգեբանական իրավիճակը, փաստելով, որ վերջին 5 տարում հանրապետությունում իրականացվող բարեփոխումները վճռական ազդեցություն չեն ունեցել բնակչության կենսամակարդակը բարելավելու, սոցիալական բեւեռացումը կանխելու գործում` ՀԴԿ-ն վերահաստատում է, որ գործող համակարգի պայմաններում երկրում արմատական փոփոխությունների իրականացումն անհնար է»:**

**Հայտարարության մեջ նաեւ նշվում է, որ քաղաքական այլակարծության ապարեզում Դեմկուսը կողմ է հանդուրժողականությանը ու գտնում է, որ վաղուց ժամանակն է համալիր քայլերով մաքրելու հասարակական աղտոտված մթնոլորտը:**

**ՀԴԿ-ն հայտարարում է, որ կաջակցի ՀՀ նախագահ, նախագահի թեկնածու Սերժ Սարգսյանին այնքան ժամանակ, որքան որ նա կշարունակի իրականացնել գործողություններ երկիրն իրական զարգացման ուղի դուրս բերելու եւ արտաքին մարտահրավերներին դիմակայելու համար:**

# Ստեփանակերտի օդանավակայանի գործարկման, Չիկագոյի կոնվենցիայի եւ հարակից հարցերի մասին

## *Կամ` ձեզ եմ դիմում, պարոնայք համանախագահներ*

*1-ին էջից*

գ. Կոնվենցիայի 1-ին հոդվածը սահմանում է սուվերենությունը. «Պայմանավորվող պետությունները ճանաչում են, որ յուրաքանչյուր պետություն իր տարածքից վեր օդային տարածության նկատմամբ ունի լիակատար եւ բացառիկ սուվերենություն»:

դ. 2-րդ հոդվածը մեկնաբանում է, թե որն է լիակատար եւ բացառիկ սուվերենության իրավունքի տարածքը. «Սույն կոնվենցիայի նպատակով պետությունների տարածք ճանաչվում են ցամաքային տարածքները եւ դրանց հարող տարածքային ջրերը, որոնք գտնվում են տվյալ պետության սուվերենության, սյուզերենության, պրոտեկտորատի կամ մանդատի ենթակայության տակ»:

Այսինքն, կոնվենցիայի իմաստով «տարածքի եւ դրանից վեր օդային տարածության նկատմամբ բացառիկ սուվերենության» իրավունքի աղբյուր ճանաչված է ստատուս քվոն կամ դե ֆակտո դրությունը: Հակառակ դեպքում խոսք չէր լինի սյուզերենության, պրոտեկտորատի կամ ենթամանդատության` այն տարածքների մասին, որոնց միջազգային կարգավիճակը հետագայում կարող է փոխվել:

Կոնվենցիային միանալու պահի դրությամբ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքը եւ դրանից վեր օդային տարածությունը դե ֆակտո չի գտնվել եւ չի գտնվում Ադրբեջանի սուվերենության, սյուզերենության, պրոտեկտորատի կամ մանդատի ենթակայության տակ:

«Միջազգային իրավունքի սկզբունքների մասին» Միավորված ազգերի կազմակերպության հռչակագրի իմաստով, որը միջազգային իրավունքի` բոլոր պետությունների կողմից ճանաչված, միակ օրինական մեկնաբանությունն է, «պետությունները պարտավոր են հարգել միջազգային դեմարկացիոն եւ զինադադարի գծերը, որոնց հաստատմանը նրանք ... մասնակից են»: (տես` http://sevkrimrus.narod.ru/ZAKON/deklmegd.htm)



Ըստ այդմ, ԼՂՀ տարածքի եւ դրանից վեր օդային տարածության նկատմամբ Ադրբեջանի սուվերենությունը սահմանափակված է ոչ միայն կոնվենցիայի 2-րդ հոդվածի իմաստով, այլեւ, որ չափազանց կարեւոր է, հակամարտության գոտում 1994 թ. հաստատված հրադադարի ռեժիմի մասին Ադրբեջանի լիակատար մասնակցությամբ ձեռք բերված համաձայնություններով, որոնց օրինապատշաճ ձեւով ճանաչված կողմ է նաեւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը:

Կոնվենցիայի իմաստով տարածքի նկատմամբ պետության սուվերենությունը, սյուզերենությունը, պրոտեկտորատը կամ մանդատն են նույն տարածքից վեր օդային տարածության հանդեպ իրավունքի աղբյուրը: Այսինքն, եթե ցամաքային տարածքը պետության սուվերեն կամ նշված որեւէ ձեւի ենթակայության տակ չէ, իսկ մեր դեպքում դա այդպես է ոչ միայն փաստացի, այլեւ հրադադարի համաձայնությունների իրավական ուժով, ապա ապրիորի նույնը վերաբերում է նաեւ տարածքից վեր օդային տարածությանը:

Եթե Ադրբեջանը հրադադարի համաձայնություններով մինչեւ խնդրի վերջնական կարգավորումը պարտավոր է հարգել դե ֆակտո` իր կողմից դե յուրե ճանաչված իրավիճակը, չի վերահսկում եւ իրավասու չէ միակողմանի քայլեր ձեռնարկելու,- հակառակ դեպքում խախտվում են հրադադարի համաձայնությունները,- եւ վերահսկելու Լեռնային Ղարաբաղի Հանրապետության եւ այլ պետությունների միջեւ ցամաքային հաղորդակցությունը «իր միջազգայնորեն ճանաչված սահմաններում», ապա նույն կերպ սահմանափակված է նաեւ այդ պետության` «իր տարածքի մի մասից վեր օդային տարածության» նկատմամբ սուվերենությունից բխող գործողությունների դիմելու իրավունքը:

Այսու` այսպես կոչված «հակամարտության գոտի» հասկացությամբ ընդգրկվող ցամաքային տարածքի եւ դրանից վեր օդային տարածության նկատմամբ Ադրբեջանի «իրավազորություն» նույնական է, եւ քաղաքացիական օդագնացության սահմանափակման Ադրբեջանի փորձերը հակասում են հրադադարի համաձայնություններով իր ստանձնած պարտավորություններին, Չիկագոյի կոնվենցիային, միջազգային իրավունքի սկզբունքներին եւ նորմերին առհասարակ:

Այս նկատառումներում մենք գիտակցաբար բաց ենք թողնում կարգավորման բանակցություններում ԼՂ կարգավիճակի չկանխորոշվածության հանգամանքը: Ստեփանակերտի օդանավակայանի գործարկման քննարկումներում դա կարող է լինել հավելյալ քաղաքական կռվան:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԲ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960, 060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը` «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

## Անցուդարձ

# Բարի քաղաքի խաչքարից հետո՝ Հայոց ցեղասպանության ճանաչում

Հայ-իտալական բարեկամությունը խորհրդանշող եւ Բարիում այս տարվա հունվարի 11-ին խաչքար-կոթողի բացման առիթով «**Ազգ**» օրաթերթի հունվարի 30-ի համարում լույս տեսած հոդվածից հետո Իտալիայի Պուլիա նահանգում անհանգիստ ու տագնապալի իրավիճակ է ստեղծվել: Խաչքարի բացման ու օծման պաշտոնական արարողության ավարտին, քաղաքապետարանի դահլիճում, Հռոմում ՀՀ դեսպանության խորհրդական Բորիս Սահակյանին է հանձնվել Բարի քաղաքի իշխանությունների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման մասին որոշման նախագիծը, որն արդեն հաստատվել է քաղաքապետարանի ավագանու կողմից եւ մոտ ապագայում պետք է վավերացվի նախագահական խորհրդի կողմից: Այս առիթով, Բարի քաղաքում Թուրքիայի հյուպատոսությունը քաղաքապետին բողոքի նոտա է ներկայացրել, որից հետո համացանցում տեղ են գտել այս որոշման քննարկմանն ու մեկնաբանությանը վերագրվող բազմաթիվ նյութեր, որոնցում քիչ չեն բազմաբնույթ բանավեճերը:

Բարիի քաղաքապետ Միքելե Էմիլիանոյին ուղղված այն հարցին, թե արդյոք տեղական կառավարման մարմինները չունե՞ն իրենց քաղաքացիներին մտահոգող ավելի կարեւոր խնդիրներ, քաղաքապետը պատասխանել է, որ ավելի կարեւոր հարց չկա, քան մեկուկես միլիոն մարդկանց սպանդը միայն այն բանի համար, որ նրանք ազգությամբ հայ էին: Ինչպես հաղորդում է իտալական «Լա Ռեպուբլիկա» թերթի փետրվարի 2-ի համարում զետեղված «Բարիի քաղաքապետարան. Հայոց ցեղասպանությունը տեղի է ունեցել, Թուրքիան հիմա փոխվրեժով սպառնում է» վերնագիրը կրող հոդվածը (հեղինակներ՝ Սերենա Ռուսսո եւ Վինչենցո Քիումառոլո) Հայոց ցեղասպանության ճանաչման լուրն առնելուն պես, Իտալիայում Թուրքիայի դեսպան Հակկի Ակիլը Բարիի քաղաքապետին նամակ է հղել՝ խորհուրդ տալով հետաձգել որոշման ընդունումը, որպեսզի թուրք-իտալական հիասքանչ հարաբերությունները չխաթարվեն: Դիվանագիտական բախումը հասունացել է այն աստիճանի, որ Թուրքիայի դեսպանը խորհուրդ է տալիս Բարիի քաղաքապետին՝ «չգործել այնպես, ինչպես դա անում են հայ համայնքի ներկայացուցիչները, որոնք փոխանակ իրենց ուժերը կենտրոնացնեն հնարավոր դեպքերի իրականության գիտական ուսումնասիրությունների պարզաբանմանը, նախընտրում են որդեգրել որոշ քաղաքական ատյանների նախասիրությունը, որոնք հույս ունեն ընտրապայքարի շրջանում ձայներ շահել»: Մինչ այս դիվանագիտական երկխոսության վերջնական պարզաբանումը Բարիի քաղաքապետարանը հստակ դիրքորոշում է դրսեւորել՝ ի նպաստ Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման: Այս դիրքորոշումը պատմական ամուր հիմքեր ունի Իտալիայում: Բավական է մեկ անգամ եւս շեշտել, որ աշխարհի 17 երկրների խորհրդարաններից ու Միացյալ Նահանգների 38 նահանգներից բացի, ցեղասպանության ճանաչման պաշտոնական որոշում են ընդունել Իտալիայի շուրջ 40 քաղաքների, այդ թվում՝ Հռոմի, Միլանի, Ջենովայի, Ֆլորենցիայի, Պադուայի, Վենետիկի, Պարմայի, Ռավեննայի, Բելլունոյի, Ուդինեի, Բանյակավալլոյի, Քամպոնոգարայի, Ֆաենցայի, Ֆելտրեի, Իմոլայի, Միրայի, Ասիագոյի քաղաքապետարանները, ինչպես նաեւ Իտալիայի քաղաքապետարանների ազգային ընկերակցությունը եւ Լոմբարդիա նահանգի խորհուրդը: 1998 թվականին Իտալիայի քաղաքական տարբեր հոսանքներ ներկայացնող 170 խորհրդարանականների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման առաջարկ է ներկայացվել Իտալիայի խորհրդարանին: 2000 թվականի նոյեմբերի 17-ին պատգամավորների խորհուրդը ակնառու մեծամասնությամբ բանաձեւ է ընդունել Հայոց ցեղասպանության ճանաչման մասին:

Հայաստանը երախտապարտ է Իտալիայի խիզախ զավակ Ջիակոմո Գոռինիին, որը Հայոց մեծ եղեռնի տարիներին Տրապիզոնում Իտալիայի հյուպատոս էր եւ երիտթուրքերի կազմակերպած զանգվածային տեղահանման ու սպանդի ականատեսը: Առաջին համաշխարհայինի սկզբներին, երբ բախվում էին Իտալիայի եւ Թուրքիայի շահերը, Ջիակոմո Գոռինին ստիպված վերադառնում է հայրենիք եւ տեղի «Իլ Մեսաջերո» թերթին հանձնում ցեղասպանության մասին իր ստացած մանրամասն տեղեկություններն ու նկարագրությունները: Այնուհետեւ, 1918 թվականին, լույս է տեսնում նրա վկայությունների «Մեմորիալե» վերնագրով հատորը, որը հիմք դարձավ Սեւրի, Ժնեւի ու Լոզանի պայմանագրերի խմբագրման ժամանակ: Հայաստանի առաջին հանրապետության ստեղծումից անմիջապես հետո Գոռինին հրավիրվում է Երեւան որպես Իտալիայի դեսպան, սակայն 1920 թվականին Հայաստանի խորհրդայնացումից հետո նա ստիպված վերադառնում է Իտալիա՝ գնահատելով ստեղծված իրավիճակը որպես «պետական վաղանցիկ իրողություն»:

91 տարեկան հասակում դադարում է բաբախել նրա սիրտը, իսկ 2001 թվականին Գոռինիի աճյունի մասունքները տեղափոխվում են Երեւան եւ ամփոփվում Ծիծեռնակաբերդի հուշահամալիրի կողքին՝ «Հիշողության պատ» կոչվող տեղում:

Հայկական հարցի ու ցեղասպանության համընդհանուր ճանաչման ու դատապարտման անգնահատելի վաստակի համար նրան շնորհվել է «Ճշմարիտ՝ հայերի համար» կոչումը: 1995 թվականին Ծիծեռնակաբերդի տարածքում ցեղասպանության թանգարանի տնօրեն Լավրենտի Բարսեղյանի եւ Իտալիայում «Հայերի համար ճշմարիտների կոմիտեի» նախագահ, ՀՀ պատվո հյուպատոս Պիետրո Քուչուքյանի անմիջական ջանքերով ստեղծվեց «Ճշմարիտների այգին»: 2008 թվականի հոկտեմբերի 5-ին Պադուայում հանդիսավոր արարողությամբ բացվեց «Աշխարհի ճշմարիտների այգին», որտեղ հիշատակվում են նաեւ Հայոց ցեղասպանության զոհերը:

Ի դեպ, Իտալիայում մեծ համբավ է վայելում հայազգի ականավոր գրող, Պադուա քաղաքի բնակիչ Անտոնիա Արսլանը, որը հրատարակել է Հայոց ցեղասպանությանը նվիրված եւ մեծ ճանաչում ստացած մի քանի պատմավեպ, որոնցից ամենահայտնին՝ «Արտույտների ագարակը», թարգմանվել է շուրջ 20 լեզուներով: 2007 թվականին իտալացի ռեժիսորներ Տավիանի եղբայրները գեղարվեստական ֆիլմ են նկարահանել Արսլանի հիշյալ գրքի հիման վրա:

Ավելորդ չէ նշել, որ Իտալիայում Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման դժվարին գործին միշտ սատար է եղել հայ-իտալական բարեկամության «Զատիկ» ընկերակցությունը, որն իր ստեղծման օրից՝ 1998 թվականի մարտի 17-ից, կազմակերպված մշակութային միջոցառումների, ցուցահանդեսների, ինչպես նաեւ միջպետական, քաղաքական ատյանների, դիվանագիտական ներկայացուցչությունների հետ կատարած համատեղ հսկայածավալ աշխատանքի շնորհիվ նպաստել է պատմական Հայաստանի տարածքում հուշարձանների պահպանման ազգանվեր գործին:

Դեռեւս 2001 թվականին Բարի քաղաքի հայ համայնքի առաջնորդ Ռուբեն Թիմուրյանի, ՀՀ նախկին դեսպան Գագիկ Բաղդասարյանի, ՀՀ նախկին հյուպատոս Սավինո Ջիաննելլայի եւ «Զատիկ» ընկերության ներկայիս պատասխանատու Վահե Վարդանյանի նախաձեռնությամբ ծնունդ առավ Բարի քաղաքում խաչքար կանգնեցնելու հրաշալի գաղափարը, որը իրականացրեց ճարտարապետ Աշոտ Գրիգորյանը: Խաչքարի բացման արարողությունը տեղի ունեցավ վերջերս:



*Վահե Վարդանյան, Ռուբեն Թիմուրյան, Միքելե Էմիլիանո եւ հայր Լորենցո:*

**ԱՐԱ ԶԱՐՅԱՆ**
**Միրանո-Վենետիկ**

ՀԱՅԱՍՏԱՆ-ՎՐԱՍՏԱՆ

# Միջազգային չափանիշներով սահմանային անցակետեր

**Երեկ Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար Արթուր Բաղդասարյանը մասնակցել է «Հայաստանի եւ Վրաստանի սահմանին գտնվող Բավրա-Նինոծմինդա պետական սահմանի անցման կետերի սահմանների կառավարման կարողությունների զարգացում» ծրագրի բացման արարողությանը: Մեկնարկային համաժողովին Ազգային անվտանգության խորհուրդը, ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակը, Հայաստանում ԵՄ պատվիրակությունը եւ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն համատեղ ներկայացրել են ԵՄ կողմից ֆինանսավորվող եւ ՄԱԶԾ-ի կողմից իրականացվող ծրագրի նպատակներն ու հեռանկարները:**




**Միջոցառմանը ներկա են եղել Հայաստանում հավատարմագրված դիվանագիտական առաքելությունների եւ միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ, ինչպես նաեւ Հայաստանի եւ Վրաստանի սահմանային գերատեսչությունների պատասխանատու պաշտոնատար անձինք: Համաժողովին ելույթներով հանդես են եկել Արթուր Բաղդասարյանը, ՄԱԶԾ մշտական ներկայացուցչի ժամանակավոր պաշտոնակատար Պատրիս Քոր-Բիզոն, Հայաստանում ԵՄ պատվիրակության ղեկավար, դեսպան Տրայան Հրիստեան եւ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի նախագահ Գագիկ Խաչատրյանը:**

**Իր խոսքում Արթուր Բաղդասարյանն ընդգծել է համաժողովի կարեւոր նշանակությունը եւ մասնավորապես նշել. «Մենք բավականին արդյունավետորեն համագործակցում ենք մեր գործընկերների հետ Հայաստան-Վրաստան պետական սահմանի արդիականացման ուղղությամբ: Մեր աշխատանքները մտել են վճռորոշ փուլ, եւ մենք շուտով լավ արդյունքներ կգրանցենք Բագրատաշեն, Բավրա, Գոգավան հատվածներում՝ ունենալով ԵՄ «Դեղին գրքի» ժամանակակից պահանջներին, միջազգային չափանիշներին համապատասխան սահմանային ենթակառուցվածքներ:**

**Զարգացումները թույլ են տալիս մեզ պնդելու, որ Հայաստանի Հանրապետության պետական սահմանի ողջ երկայնքով իրականացվող միջոցառումներն էլ ավելի կբարձրացնեն ու կամրապնդեն մեր սահմանային անվտանգությունը: Այս ծրագրի լիարժեք կենսագործումը կնշանակի կոռուպցիոն ռիսկերի կտրուկ նվազեցում կամ վերացում, մաքսանենգության դեմ պայքարի մեխանիզմների կատարելագործում, բեռների եւ քաղաքացիների առավել արագ եւ ազատ տեղաշարժ, բյուրոկրատական քաշքշուկների եւ ավելորդ թղթաբանության վերացում»:**

**Ծրագիրը, որի ընդհանուր բյուջեն կազմում է 1,403,000 եվրո, նպատակ ունի հայ-վրացական պետական սահմանի «Բավրա» եւ «Նինոծմինդա» անցման կետերում ներդնել սահմանների համալիր կառավարման եվրոպական չափանիշներ, որոնք ուղղված կլինեն միջազգային առեւտրի եւ տարանցիկ փոխադրումների խթանմանը, ինչպես նաեւ մարդկանց միջսահմանային շարժի հեշտացմանը:**

# 843 հազար զբոսաշրջիկ եւ 170 հազար դոլարանոց զուգարաններ

## *Էկոնոմիկայի փոխնախարարը ներկայացրեց Հայաստանում զբոսաշրջության ցուցանիշները 2012-ին*

**2012-ին Հայաստան է այցելել 843 հազար զբոսաշրջիկ, ինչը 11,3 տոկոսով ավելի է, քան 2011-ին: Երեկ տեղի ունեցած մամուլի ասուլիսի ժամանակ հայտնեց էկոնոմիկայի փոխնախարար Արա Պետրոսյանը: Նա նշեց այն հիմնական երկրները, որտեղից առավել ակտիվ են Հայաստան այցելում՝ ԱՄՆ, Ռուսաստան, Իրան, Ճապոնիա, իսկ Եվրոպայից՝ Գերմանիա, Ֆրանսիա, վերջերս նաեւ Իսպանիա: Փոխնախարարի հավաստմամբ, նվազագույնը 1, իսկ առավելագույնը 2 տարում Հայաստան այցելող զբոսաշրջիկների թիվը կգերազանցի 1 մլն-ը:**

**Ինչ վերաբերում է համաշխարհային տուրիզմին, ապա աճել է ընդամենը 4 տոկոսով՝ հասնելով 1 մլրդ զբոսաշրջիկի:**

**Արա Պետրոսյանն անդրադարձավ նաեւ պետական բյուջեի ֆինանսավորմամբ 2012-ին Հայաստան ներկրված 2 զուգարանների հարցին, որոնց համար հատկացվել էր 124 մլն դրամ (340 հազար դոլար, յուրաքանչյուրը՝ 170 հազար դոլար), ասելով, որ դրանք զբոսաշրջության զարգացման համար մեծ նշանակություն ունեն: Զուգարաններից մեկը տեղակայվել է Տաթեւի ճոպանուղու, մյուսը՝ Երեւանի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու մոտ: Էկոնոմիկայի փոխնախարարի տեղեկացմամբ՝ այդ զուգարաններում մաքրությունը պահպանելու ժամանակակից տեխնոլոգիաներ են կիրառվում: Դրանք կշահագործվեն ինքնաֆինանսավորմամբ՝ 200 դրամ վճարով:**

**Ա. Մ.**

ԱԶԳ

# Նախընտրական կրկես



# «Էվոլյուցիա՞, թե՞ ռեւոլյուցիա»՝ Վրաստանում առանց ռուսական «թաթի» չեն պատկերացնում

Ջավախահայ հասարակական ակտիվիստ Վահագն Չախալյանի՝ համաներմամբ ազատ արձակվելն, ամենայն հավանականությամբ, դեռ երկար քննարկումների տեղիք է տալու, քանի որ վրացական իշխանություններից դուրս այդ համատեքստում տարբեր հարցեր դիտարկելու իրենց հերթին են հասել նաեւ հակառուսական կամ ռուսամետ լրատվամիջոցները՝ առանց առանձնակի տարանջատման:

Հասկանալի է, որ ռուսական հետքն ամենուրեք տեսնելու Սաակաշվիլիական մոտեցման արդյունքում ռուսական մամուլն էլ ամեն առիթ բաց չի թողնի այս կամ այն կերպ անդրադառնալու Վրաստանին ու հակառուսական համատեքստում անընդհատ քննարկվող հայկական իրականությանը, սակայն ակնհայտ է, որ առաջին հերթին արդարության վերականգնման փորձ դիտարկվող համաներմամբ ազատումը գոնե պետք է չչարաշահվեր:

«Կավկազսկայա պոլիտիկա» պարբերականն, օրինակ, կիսասպառ, որոշ դեպքերում էլ ուղղակի սխալ մեկնաբանություններում ու «փաստերով» է ներկայացրել Չախալյանի ազատումն ու դրա հետ կապված դեպքերը, թե իբր Չախալյանն ազատվել է Վրաստանի վարչապետ Բիձինա Իվանիշվիլու՝ Երեւան այցելության ժամանակ կայացված որոշմամբ, դրա համար խնդրանքով դիմել է Ամենայն հայոց կաթողիկոսը այն դեպքում, երբ Վրաստանի նախագահ Միխեիլ Սաակաշվիլին ու իր թիմակիցներն էլ այդ ամենում տեսել են «Ռուսաստանի ձեռքը» կամ «թաթը», եթե կուզեք:

Այս առնչությամբ պարբերականը ներկայացրել է, որ խուլիգանության ու անօրինական զենք պահելու մեղադրանքներով դատապարտված Չախալյանին Սաակաշվիլին «Վրաստանի թշնամի» ներկայացրեց, մինչդեռ Իվանիշվիլու կողմնակիցները քաղբանտարկյալի ազատ արձակումը դիտարկում են որպես արդարադատության վերականգնում: Ասել է թե վրաց հասարակությունը Չախալյանի հարցում կիսվել ու միմյանց դեմ է հանդես գալիս:

Այդ հանգամանքը նաեւ արտահայտվեց, երբ Ռուսաստանի ջավախքյան սփյուռք կազմակերպությունը առաջարկով դիմեց վրացական կառավարությանը՝ Ջավախքում ազատ տնտեսական գոտի ստեղծելու մասին: Սաակաշվիլին, որ ժամանակին ամեն ինչից խոսում էր ու խոստանում, միայն թե Ջավախքում իրեն վերագրվող գրեթե 100 տոկոս ձայները այդուհետեւ արդարացնելու անհրաժեշտություն չառաջանա, Ջավախքում ազատ տնտեսական գոտու գաղափարը գրեթե «անջատողական» է համարել:

Որ Սաակաշվիլին վերջին շրջանում առիթ-անառիթ անդրադառնում է Ջավախքին ու այդ համատեքստում նաեւ Չախալյանին, վկայում է հենց Վրաստանի նախագահի՝ իրականությունից ու տեղի ունեցող ոչ հաճելի իրադարձություններից հանրության ուշադրությունը նախ շեղելու ցանկության մասին: Միեւնույն ժամանակ, Սաակաշվիլին, ինչ հարց էլ բարձրացվի Վրաստանում հայության խնդիրների առումով, սովորություն է դարձրել դրանք Ջավախքն անկախացնելու սուտով մատուցել, այն էլ՝ «Մոսկվայի դավադրությամբ»:

«Սեգոդնյա.ռու» պարբերականն էլ հիշեցրել է Ռուսաստանի ջավախքյան սփյուռքի՝ Ջավախքում ազատ տնտեսական գոտի ստեղծելու առնչությամբ Սաակաշվիլու հիստերիկ արձագանքը, եւ դա այն դեպքում, երբ նույն կազմակերպությունը բազմիցս ու տարբեր առաջարկներով, դիտարկումներով ու քննադատությամբ է հանդես եկել, սակայն երբեք չի արժանացել Սաակաշվիլու այնպիսի մեծ ուշադրության, ինչպես վերջին երկու շաբաթում:

Ամեն դեպքում, վրացական իրականության գործոնները կարծես փոխվում են եւ արմատապես, այնպես որ ամեն ինչում նախկինում ռուսներին, հիմա էլ Չախալյանին մեղադրող Սաակաշվիլին իսկապես հանրության ուշադրությունը շեղելու խնդիր ունի. Ներկայիս իրավապահները մեծ հետաքրքրություն են ցուցաբերում նախկին իրավապահների՝ Սաակաշվիլու թիմակիցների ու մտերիմների նկատմամբ, ընդհուպ նրանց նախկին գործերի, այդ թվում՝ Վրաստանի վարչապետ Զուրաբ Ժվանիայի մահվան առնչությամբ հարցաքննության, ներառելով նաեւ իրեն՝ Սաակաշվիլուն:

Ի դեպ, Սաակաշվիլուն, նախկին պաշտպանության նախարար Մերաբիշվիլուն սպասվող ոչ հաճելի իրավիճակների մասին նշել էր նաեւ ներկայիս վարչապետ Իվանիշվիլին՝ իր կառավարման 100-րդ օրը: Իվանիշվիլին «վախի մեջ» ապրող Սաակաշվիլու, Մերաբիշվիլու եւ Թբիլիսիի քաղաքապետ Գիգի Ուգուլավայի առնչությամբ հայտարարել էր, թե «տեղին են վախենում», քանի որ վախենալու բան ունեն:

Ու թեեւ Իվանիշվիլին նույն այդ համատեքստում նշել էր «էվոլյուցիա, ոչ թե ռեւոլյուցիա» տարբերակով այսուհետեւ առաջնորդվելու մասին, ակնհայտ է, որ Վրաստանը կրկին բռնել է ռեւոլյուցիոն ճանապարհ՝ թեկուզ Չախալյանի հարցում տարբեր շահերի ներքո ներկայացնելով Ջավախքն ու հայերի խնդիրները:

Վ. ՊՈՂՈՍՅԱՆ

# Չինաստանում թանկարժեք նվերների գովազդն արգելվեց




**ՉԺՀ-ում գրաքննությունն այսուհետեւ կարգելի թանկարժեք նվերների գովազդը ռադիոյի եւ հեռուստատեսության բոլոր ալիքներով:**

**Ավելի վաղ կենտրոնական իշխանությունները ԶԼՄ-ներին կոչ էին արել մարդկանց մեջ դաստիարակել խնայողության զգացում, շռայլումներից զերծ մնալու ձգտում: Սինհուա գործակալությունը հաղորդում է, որ ՉԺՀ բարձրագույն ղեկավարությունը վերջերս պաշտոնյաներից պահանջում է ապրել համեստ եւ ժուժկալ կյանքով:**

**«Մշակույթի պաշտպան եւ գաղափարախոսական հենարան համարվող ռադիոն ու հեռուստատեսությունը պարտավոր են ամբողջապես ծառայել ժողովրդի դաստիարակությանը, քարոզելով չինական լավ ավանդույթներ եւ քաղաքակիրթ ապրելակերպ», ընդգծում է գործակալությունը:**

**Պետհեռուստառադիոյի ղեկավարությունը տեղական հեռուստաալիքներին հորդորում է ավելի շատ հեռարձակել սոցիալական գովազդեր:**

**Թանկարժեք իրերի եւ պերճանքի առարկաների գովազդման արգելքը կաշառակերության դեմ ՉԺՀ ծավալված պայքարի բաղադրիչներից է:**

# Ուժեղ երկրաշարժ եւ ցունամի Խաղաղ օվկիանոսում

Երեկ առավոտյան Սողոմոնյան կղզիների մոտակայքում արձանագրված ուժգին ստորգետնյա ցնցումների հետեւանքով կղզիներում ավերվել է մի քանի բնակավայր, հաղորդում է Ֆրանսպրես գործակալությունը:

Սանտա Կրուս կղզու շրջանում տեղի է ունեցել 8 մագնիտուդով երկրաշարժ, որից հետո զգացվել են նոր ցնցումներ, մասնավորապես՝ 6,4 եւ 6,6 մագնիտուդով:

Ստորգետնյա ցնցումները ցունամի են առաջացրել Խաղաղ օվկիանոսի զգալի մասում: Մոտ 1 մետր բարձրության ալիքը հասել է Սողոմոնյան կղզիներին՝ հեղեղելով Լատե բնակավայրում գտնվող օդանավակայանի թռիչքադաշտը:




Նոր Զելանդիայի հեռուստատեսությունը հաղորդում է, որ տարերքի հարվածից զոհվել է 5 մարդ, բոլորն էլ՝ Սանտա Կրուզ կղզում: Կղզու ծովափնյա շրջաններում ավերվել է առնվազն 3 գյուղ, որտեղ մոտ 700 մարդ էր ապրում: Ենթադրվում է, որ զոհերի թիվը կարող է ավելանալ:

Սողոմոնյան կղզիները տուժել էին նաեւ 2007 թվականին 8,1 մագնիտուդով երկրաշարժից: Այն ժամանակ զոհվել էր առնվազն 50 մարդ, անհետ կորել էին տասնյակ մարդիկ, ավերվել էր 13 գյուղ:



ՆՈՐ ԶԱՐԳԱՑՈՒՄ

# Գրոհային խմբերի միջեւ զինված հակամարտություն Հալեպում



Սիրիայի Հալեպ քաղաքում կառավարական զորքերի եւ ընդդիմության հակամարտությանն ավելացել է մի նոր զինված հակամարտություն: Խոսքը պատսամբ գրոհայինների տարբեր խմբավորումների դիմակայության մասին է:

«Ալ Վաթան» թերթի տեղեկությունների համաձայն, Հալեպում մարտեր են սկսվել արմատական իսլամիստների երկու խոշորագույն խմբավորումների՝ «Ջեբհաթ ան Նուսրայի» եւ «Լիվա աթ Թաուհիդ» բրիգադի մարտիկների միջեւ: Հակամարտության պատճառն այն է, որ վերջիններս փորձել են առեւանգել «Ջեբհաթ ան Նուսրայի» անդամներից մեկին:

«Լիվա աթ Թաուհիդ» բրիգադը Հալեպում ընդդիմության ամենամեծ զինված խմբավորումն է, համարվում է չափավոր իսլամիստական եւ ենթակա է սիրիացի «Մուսուլման եղբայրներին»: Մինչդեռ «Ջեբհաթ ան Նուսրան» սուննի արմատական խմբավորում է, կապված է «Ալ Ղաիդայի» հետ եւ անցյալ տարվա դեկտեմբերից ԱՄՆ-ում ընդգրկված է ահաբեկչական կազմակերպությունների ցանկում, նշում է ՌԻԱ գործակալությունը:

Ավելի վաղ երկու խմբավորումներն էլ հրաժարվել էին ճանաչել 2012-ի նոյեմբերին Դոհայում Սիրիայի ընդդիմադիր եւ հեղափոխական ուժերի կազմած Ազգային կոալիցիան:

«Ալ Վաթանը» ընդգծում է, որ անցյալում եւս տեղի էին ունեցել խմբավորումների բախումներ, գլխավորապես՝ կողոպտված ունեցվածքի բաշխման հողի վրա, բայց գրոհային խմբերի միջեւ զինված բախումները Սիրիայում նոր երեւույթ են:

# Անօդաչու ինքնաթիռների ռազմակայան Սաուդյան Արաբիայում



Ամերիկացիները Սաուդյան Արաբիայում անօդաչու ինքնաթիռների գաղտնի ռազմակայան են կառուցել՝ Եմենում ահաբեկիչներին ոչնչացնելու նպատակով: «Նյու Յորք թայմս» թերթը տեղեկացնում է, որ ռազմակայանը կառավարում են ԿՀՎ գործակալները:

Այդ ռազմակայանն առաջին անգամ օգտագործվել է 2011 թ. «Ալ Ղաիդայի» բարձրաստիճան ներկայացուցիչ Անվար ալ Ավլակիի սպանության նպատակով:

Թերթը ընդգծում է, որ ամերիկյան անօդաչու ինքնաթիռների հարվածներից հաճախ սպանվել են ոչ միայն ահաբեկիչներ, այլեւ խաղաղ բնակիչներ:

ԱՄՆ-ը մտադիր է թռչող սարքերի ռազմակայան ստեղծել նաեւ Արեւմտյան Աֆրիկայում: Ենթադրվում է, որ անօդաչու ինքնաթիռները տվյալ տարածաշրջանում կօգտագործվեն ահաբեկիչների վերաբերյալ տեղեկություններ հավաքելու նպատակով: Անհրաժեշտության դեպքում այդ ինքնաթիռները կհանդերձավորվեն հրթիռներով:

ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ ՈՒ ՀԱՄԵՐԳ

# Ծանոթանում ենք Քուվեյթի մշակույթին



Երեկ Հայաստանի ազգային պատկերասրահում տեղի ունեցավ Քուվեյթի մշակույթի օրերի բացումը՝ արաբական արվեստը ներկայացնող ցուցահանդեսով, որից հետո Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի թատրոնում կայացավ Քուվեյթի պետական ազգային անսամբլի ելույթը:

Մշակույթի նախարար **Հասմիկ Պողոսյանն** ասաց. «Մշակույթն այն կամուրջն է, որը միավորում է ժողովուրդներին: Մշակույթի օրերն իրականացվում են Հայաստանի եւ Քուվեյթի կառավարությունների միջեւ մշակութային համաձայնագրի շրջանակներում: 2011 թ. հայ մշակույթը լայնածավալ ծրագրով ներկայացրեցինք Քուվեյթի պետությունում, իսկ այժմ հյուրընկալում ենք քուվեյթյան մշակույթի ներկայացուցիչներին Հայաստանում»:

Մինչեւ փետրվարի 10-ը Հայաստանում կշարունակվեն Քուվեյթի մշակույթի օրերը: Պատվիրակությունը ղեկավարում է մշակույթի, արվեստների եւ նամակագրության Ազգային խորհրդի գլխավոր քարտուղար Ալի Հուսեյն Ալյուհան, իսկ պատվիրակության կազմում ընդգրկված է շուրջ 40 հոգի:

Քուվեյթի պատվիրակության անդամները նշեցին, որ մշակույթը ժողովրդի եւ ազգերի փոխհասկացության, միմյանց մոտենալու լեզու է: Ըստ նրանց, այս այցելությունը հարմար առիթ է հայ հասարակությանը ծանոթացնելու Քուվեյթի մշակույթին, նաեւ ծանոթանալու Հայաստանի մշակութային կյանքին, կարծիքներ փոխանակելու, զարգացնելու մշակութային կապերը, ծանոթանալու հայկական մշակույթին:

Երեւանում եւ Գյումրիում նախատեսվում են Քուվեյթի պետական ազգային անսամբլի ելույթները, արաբական արվեստի ցուցահանդես (կերպարվեստ, լուսանկարչություն), ինչպես նաեւ Քուվեյթի մասին պատմող վավերագրական ֆիլմի ցուցադրություն:

Մշակույթի օրերի ընթացքում պատվիրակությունը կայցելի Հայաստանի պատմամշակութային վայրեր եւ մշակութային հաստատություններ:

Ս. Հ.

# Իրանի մշակույթի օրերը Հայաստանում

Նկարիչների միությունում երեկ բացվեց ցուցահանդես՝ նվիրված Իրանի Իսլամական հեղափոխության 34-րդ տարեդարձին:

Ցուցահանդեսին ներկայացված էին մանրանկարներ, քանդակներ, ինչպես նաեւ ձեռքի աշխատանքներ, իրանական արվեստին ու պատմությանը վերաբերող գրականություն: Ցուցահանդեսը գործելու է մինչեւ փետրվարի 10-ը:

Նկարիչների միության նախագահ Կարեն Աղամյանը բացման խոսքում ներկայացրեց ցուցահանդեսի բուն նպատակը եւ արտահայտվեց հայ-իրանական մշակույթի համագործակցության մասին: Իսկ մշակույթի փոխնախարար Արեւ Սամուելյանը կարդաց նախարար Հասմիկ Պողոսյանի ուղերձը՝ նվիրված հեղափոխության 34-րդ տարեդարձին: Փոխնախարար Ա. Սամուելյանը նշեց, որ շարունակական են լինելու հայ-իրանական մշակութային ծրագրերը, մասնավորապես մշակութային ժառանգության պահպանման ուղղությամբ:



«20-22 տարի է մենք տարածաշրջանում տեսնում ենք, թե որտեղ է կայանում իսկական բարեկամությունը: Իրանի եւ մեր երկրի միջեւ ճշմարիտ բարեկամություն է, եւ եթե շուրջ 20 տարի առաջ մենք կիսում էինք մի կտոր ցորենի հացը միմյանց հետ, ապա այսօր մեր երկիրը ոտքի է կանգնել, տեսել է իր մեջքը, եւ տարվա ընթացքում համատեղ կազմակերպում ենք բազմաթիվ միջոցառումներ և՛ գեղարվեստական, և՛ նկարչական, և՛ գրական, և՛ դրամատուրգիայի ոլորտներում», ասաց Հայաստանի գրողների միության նախագահ **Լեւոն Անանյանը**: Նա նշեց, որ չկա որեւէ բնագավառ, որտեղ Հայաստանը եւ Իրանը չունենան համատեղ ծրագրեր: Անանյանը հույս հայտնեց, որ առաջիկայում շարունակական կդառնան եւ կընդլայնվեն մշակութային ծրագրերը, քանի որ դրանք միմյանց ճանաչելու լավագույն միջոցն են:

Իրանի նորանշանակ դեսպան **Մուհամմադ Ռեիսին** էլ ասաց, որ իր համար մեծ պատիվ է նշանակվել դեսպան հենց Հայաստանում եւ մասնակցել այս ցուցահանդեսի բացմանը. «Արվեստն այնպիսի բան է, որ որքան հնանում, այնքան ավելի արժեքավոր է դառնում: Հաջողություն են վայելում այն ստեղծագործողները, որոնք մեծ սեր են ներդրել իրենց գործում: Իրանի իսլամական հեղափոխության 34-րդ տարեդարձին մեծ դերակատարություն են ունեցել նաեւ արվեստագետները, որոնք կատարված իրողությունները ներկայացրել են իրենց արվեստում»: Դեսպանը նշեց, որ եթե ժողովուրդն ունի արժեքավոր արվեստ, մշակույթ, ապա ոչ ոք այդ ժողովրդին չի կարող որեւէ բան պարտադրել:

Մշակույթի օրերը մեկնարկել են հունվարի 31-ին, որի շրջանակում, բացի այս ցուցահանդեսից, տեղի կունենան նաեւ մրցույթներ՝ աշակերտների մասնակցությամբ, իրանական ֆիլմերի շաբաթ, եւ արեւելագետ-իրանագետ Էմմա Բեգիջանյանի «Ծիածան» գրքի շնորհանդեսը:

Իրանական ֆիլմերի օրերին հանրությունը հնարավորություն կունենա դիտելու հետեւյալ ֆիլմերը՝ «Աղա Յուսեֆ», «40-ամյակը», «Այստեղ, առանց ինձ», «Մանուկ եւ հրեշտակ», «Ալգհայմեր», «Պատիժ», «Ոսկի եւ բրոնզ»:

Ֆիլմերը ցուցադրվելու են Երեւանի կապույս մզկիթում՝ փետրվարի 4-10-ը:

ՄԱՆԱՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

# Արդի հայ գեղարվեստական մտքի զարգացումների կամարում

«Կամարի» հերթական 17-րդ համարը փակում է 2012 թվականը, արձանագրում մեր գրատպության շնորհիվ մարդկային քաղաքակրթության պատմության մեջ հայկականի հետքը թողնելու նշանակությունը եւ ձեւակերպում տարվա հոբելյանական ձեռնարկների ընդհանուր պատգամը՝ «Հայ գիրքը դարձնել ամէնօրեայ մշտնջենական ներկայութիւն մեր անհատական եւ հասարակական կեանքին մէջ»:

Համարի բովանդակության ցանկը ընթերցողական որոշակի հետաքրքրություն է խոստանում, ընդգրկելով անուններ, որոնց գրչի որակն այսպես ասած արդեն փորձված է, իսկ նոր անուններն ինքնին բացահայտման հետաքրքրությունն ունեն: «Կամարին» տարբերական աշխատակցություն ապահովում են մի շարք գրողներ, հրապարակագիրներ, լեզվաբաններ՝ ինչպես Հայաստանից, նաեւ սփյուռքից (Ն. Ադալյան, Խ. Խաչեր, Խ. Տետեյան, Պ. Սիմոնյան, Հ. Նազուլյան, Ա. Արծրունի, Ա. Եղիայան, Պ. Աղբաշյան):

Այս թողարկման գեղարվեստական բաժնի չափածո մասը ներկայացնում են բանաստեղծներ Հենրիկ Էդոյանը, Հակոբ Պալյանը, Հարություն Նազուլյանը, Վաչե Պետրոսյանը: Հ. Էդոյանի վերջին շրջանի անտիպ այս գործերը կյանքի ճամփաբաժաններին ու սահմաններին գտնվողի պատկերային խոհեր են, կարճ, սեղմ տողերի մեջ ապրածն իմաստավորելու կամ «իմաստազրկելու» ներքին «թափառումների»՝ պրոեկցիայի արտահայտություն՝ հաճախ վերացարկման, երբեմն էլ՝ շատ որոշակի խոսքի միջոցով: Խաչիկ Տետեյանը ապրումի ու զգացումի (անցնող սերեր, բաժանված ճամփաներ, մենակություն) վրա կառուցված քնարական ներհուն վիճակներ է ներկայացնում:

Արձակի բաժնում հանդիպում ենք Նորայր Ադալյանին («Որոշեց սպանել»), Էդուարդ Ա. Գրիգորյանին («Ծաղկադաշտը»), Հակոբ Ադամյանին («Զախմոխ կ՚ունե՞ս»), Խաչիկ Խաչերին («Շահ-Մաթ»), Պերճուհի Ադամյանին («Անակնկալը») եւ ուրիշների: Ն. Ադալյանի վերոնշյալ պատմվածքը, ինչպես նախորդ համարներում տպագրվածները, դարձյալ «պեղումնաբանություն» է մարդկային հոգու բարդ կառույցում. գրողն աշխատում է մարդու ենթագիտակցական շերտերի հետ եւ հասկապես հիվանդագին, պաթոլոգիկ երեւույթներ է ի հայտ բերում (ուշադիր հետեւելիս դրանք կարծես օրինաչափ են): Թվում է՝ սեւեռված է կին-տղամարդ հարաբերությունների սեռային-սիրային, այս պատմվածքում՝ խանդի դրսեւորումների նկարագրություններում. իրականում գրողը բացահայտում է մարդու ներքին կյանքի, նրա մտքի, երեւակայության այն ուժը, որը կարող է ինչպես արարող, այնպես էլ կործանող լինել, ուղղվելով ինքն իր դեմ, սպանել ինքն իրեն:

«Լիբանանյան գրականություն» բաժնում Սարգիս Կիրակոսյանի թարգմանությամբ տպագրվել են Լիբանանի ժամանակակից բանաստեղծ Ատտո Լատաֆի գործերից. անցյալ տարի նա Ստեփանակերտում եւ Շուշիում տեղի ունեցած պոեզիայի միջազգային առաջին փառատոնի մասնակիցներից էր:




Համարի «Քերականագիտական բաժինը» վարում է Արմենակ Եղիայանը, որն անդրադառնում է հայերենի հոգնակի գոյականակերտ՝ *եր, ներ* մասնիկների բավականին տարածված սխալ գործածության դեպքերին եւ հանգամանորեն ներկայացնում է ընդհանուր կանոններից շեղված բառերի գրության ճիշտ ձեւերը:

«Գրախոսական» խորագրի ներքո տպագրված է Պարույր Աղբաշյանի հոդվածը՝ Վաչե Սեմերճյանի «Յիշատակելի դիմաքանդակներ» մեծադիր գրքի առիթով, որտեղ հեղինակը բնութագրվում է որպես «զօրաւոր անհատականութեան տէր, անտեղիտալիօրէն վճռական եւ անշեղ գաղափարախօս», հայ դպրոցին, մամուլին ու մշակույթին նվիրումով ծառայած անձնավորություն: Իր գրքում Սեմերճյանը հանրագումարի է բերում սփյուռքի ազգային-հասարակական գործիչների, խմբագիր-հրապարակագիրների պատկառելի մի խումբ, որոնց մեջ՝ ինչպես իր ուսուցիչներն են՝ Գերսամ Ահարոնյան, Օննիկ Սարգիսյան, Արա Թոփչյան, նաեւ գաղափարակիցները՝ Անդրանիկ Անդրեասյան, Երվանդ Ազատյան, Հայկաշեն Ուզունյան, Ալեք Գըլճյան, Նուբար Ակիշյան, Երվանդ Պապազյան եւ մտերիմները՝ Օշին Քեշիշյան, Հարութ Երեցյան, Սարգիս Վահագն, Զավեն Մսըրլյան, Արամ Սեփեթճյան եւ ուրիշներ:

«Նկարչական» խորագրի տակ Հրազդան Թոքմաջյանը ներկայացնում է Հալեպի Ս. Աստվածածին եկեղեցում պահվող «Խաչելություն» սրբապատկերի վերականգնողական աշխատանքների ժամանակ ծխի, մոմի հաստ շերտի տակից իր հայտնաբերած անհայտ հեղինակի անունը: Հետագայում «Այնթապի ասեղնագործություն» գրքի նյութերը հավաքելիս նա հանդիպում է Տիգրան Զաքմաճյանի գրությանը, որը տեղեկություններ էր պարունակում անհայտ նկարչի՝ Գրիգոր Գաբրիելի մասին:

«Նամականին» շարունակում է Բախտիար Հովակիմյանի ներկայացրած «Գրիգոր Զոհրապը եւ Վարդգէսը Հռիփսիմէ Սերենգուլեանի նամակներում» հրապարակումը, եւս մի շատ տպավորիչ ու ազդեցիկ նամակ ֆրանսիացի բանաստեղծ Շառլ Բոդլերից՝ ուղղված գերմանացի կոմպոզիտոր Ռիխարդ Վագներին (Պարգեւ Շահբազյանի թարգմանությամբ եւ ծանոթագրությամբ): Նամակը, որ գրվել է Փարիզում Վագների տված երեք համերգների ունկնդրությունից հետո, ոչ միայն մտավորականի անկեղծ հիացմունքի խոստովանությունն է արտահայտում, նաեւ ժամանակի հասարակության, մամուլի ու մտավորականության վերաբերմունքը: «Ես այն տարիքին եմ, երբ հռչակաւոր մարդկանց նամակ գրելն այլեւս դադարում է զուարճանք լինելուց եւ ես երկար ժամանակ կը վարանէի նամակով իմ հիացմունքն արտայայտել ձեզ, եթէ ամէն օր իմ աչքերը չընկնէին ծիծաղելի եւ անարժան այնպիսի յօդուածների վրայ, ուր հնարաւոր բոլոր ջանքերն ի գործ են դրւում անարգելու, անուանարկելու համար ձեր հանճարը»:

«Այս բոլոր տխմարներից տարբերւելու համար» նա այսպիսի տողեր է ուղղում կոմպոզիտորին. «Ձեր գործերի մէջ ես ամէնուրեք զգացել եմ մեծ ձայների, մեծ աղմուկների հանդիսաւորութիւնը, բնութեան մեծ երեւոյթների շքեղութիւնը, մարդու մեծ կրքերի հանդիսաւորութիւնը...»: Հետաքրքրական է բոդլերյան նամակի հետգրության ակնարկը. «Ես չեմ աւելացնում իմ հասցէն, որովհետեւ մի գուցէ կարծէք, թէ ինչ-որ բան ունեմ ձեզնից խնդրելու»:

«Կամարի» եզրափակող էջերը տրամադրված են գրական-մշակութային վերջին իրադարձություններին (հոբելյաններ, մահազդեր, գրքի շնորհանդեսներ, ցուցահանդեսներ) համառոտ արձագանքներին եւ սփյուռքյան հրատարակություններին:

Հանդեսի այս համարի գեղանկարչական ձեւավորումն ապահովել են Պետրոս Կոնտրաճյանի, Հարություն Նազուլյանի, Գրիգոր Նորիկյանի, Գրիգոր Գաբրիելյանի գործերի վերատպությունները: Հրատարակության եւ բարձրորակ տպագրության հովանավոր՝ Գալուստ Գյուլբենկյան հիմնարկություն:

ՍԵԼԱՆՅԱ ԲԱԳԱԼՅԱՆ

# Ոչ-ոքի, որ պատիվ չի բերում Հայաստանի հավաքականին




Ֆուտբոլի Հայաստանի ազգային հավաքականին չհաջողվեց մրցաշրջանը սկսել հաղթանակով: Հակառակ ֆուտբոլասերների սպասումներին, մեր ընտրանին իր հնարավորություններից զգալիորեն ցածր հանդես եկավ ՖԻՖԱ-ի դասակարգման ցուցակում 148-րդ տեղը զբաղեցնող եւ իր կարգով մեր հավաքականին զիջող Լյուքսեմբուրգի հետ: Գրանցվեց նման մրցակցի հետ մեզ պատիվ չբերող ոչ-ոքի արդյունք: Ընդ որում՝ Հայաստանի հավաքականն արդեն 15-րդ րոպեին հայտնվել էր հետապնդողի դերում, երբ Մարիո Մյուտշը տուգանային հրապարակի մատույցներից անսպասելիորեն գրավել էր Ռոման Բերեզովսկու պաշտպանած դարպասը: Եվ միայն առաջին խաղակեսի ավարտին Էդգար Մանուչարյանին հաջողվեց վերականգնել հավասարակշռությունը: Ավելին անել այդ օրը մեր ֆուտբոլիստներն անկարող էին:

Իհարկե, ընկերական հանդիպումներում արդյունքը երկրորդական պլան է մղվում, սակայն Լյուքսեմբուրգի հավաքականի պարագայում հայ ֆուտբոլասերները մեր ընտրանուց միայն հաղթանակ պիտի ակնկալեին: Սակայն ոչ միայն հաղթանակը չգրանցվեց, այլեւ ֆուտբոլիստները չցուցադրեցին իրենց բնորոշ խաղը: Ճիշտ է, ոմանք կարող են մեղմացուցիչ փաստեր բերել, նշելով, որ ներկայումս նախապատրաստական շրջան է, ֆուտբոլիստները դեռեւս լավ մարզավիճակում չեն, հավաքականում նորեկներ փորձարկվեցին եւ այլն: Բայց չէ՞ որ այս ամենը վերաբերում է նաեւ մրցակցին, որն իր կարգով զգալիորեն ցածր էր: Սակայն համացանցով դիտելով հանդիպումը, այնքան էլ չզգացվեց մրցող թիմերի խաղամակարդակների տարբերությունը:

Հայաստանի հավաքականը բնավ էլ մեծ առավելություն չուներ լյուքսեմբուրգցիների նկատմամբ: Մեր ֆուտբոլիստները գործում էին միջին արագությամբ, հիմնականում փորձում էին մրցակցի պաշտպանությունը ճեղքել կենտրոնով, որտեղ լյուքսեմբուրգցիները մեծ ուժեր էին կենտրոնացրել: Իսկ եզրային գրոհներն էլ առանձնակի վտանգ չէին ներկայացնում իրենցից: Ինչ խոսք, զգալ տվեց Յուրա Մովսիսյանի բացակայությունը:

Լյուքսեմբուրգի հավաքականի հետ խաղում Վարդան Մինասյանը ստիպված էր մեկնարկային կազմում որոշ փոփոխություններ կատարել, քանի որ մարտի 26-ին չեխերի հետ կայանալիք խաղին որակազրկման պատճառով չեն մասնակցի պաշտպան Հրայր Մկոյանը եւ հենակետային կիսապաշտպաններ Արթուր Եդիգարյանն ու Կառլեն Մկրտչյանը: Վնասվածքի պատճառով էլ կբացակայի նաեւ Լեւոն Հայրապետյանը: Այնպես որ ընկերական այդ հանդիպումը պետք է մարզչի համար շատ հարցերի պատասխանը տար:

Լյուքսեմբուրգի հավաքականի հետ խաղում մեր ընտրանիում նորամուտը նշեցին Նորայր Ասլանյանը, Արտյոմ Խաչատուրովն ու Կարեն Մուրադյանը: Իհարկե, մեկ խաղով դժվար է գնահատական տալ նրանց ելույթին: Նշենք, որ Ասլանյանը փոխարինման մտնելով, կարող էր աչքի ընկնել, սակայն նպաստավոր դիրքից վրիպեց: Իսկ Արտյոմ Խաչատուրովը խաղային դրվագներից մեկի ժամանակ սխալվեց ու քիչ էր մնացել մրցակիցը 2-րդ գնդակը խփեր: Լավ էր, որ հուսալի գործեց Ռոման Բերեզովսկին:

Իհարկե, մեկ խաղով դժվար է հեռուն գնացող եզրակացությունների հանգել: Անշուշտ, մարտի 26-ին Հայաստանի հավաքականը չեխերի հետ խաղին կներկայանա այլ կազմով ու տրամադրվածությամբ: Հուսանք, որ առաջիկա խաղում հավաքականն իր երկրպագուներին կուրախացնի թե՛ դրական արդյունքով, թե՛ ցուցադրած խաղի բարձր որակով:

Իսկ այժմ ֆուտբոլասերներին ներկայացնենք մրցող թիմերի մարզիչների կարծիքը:

**Վարդան Մինասյան** (Հայաստան) - Չէի ասի, թե մեզ համար խաղի արդյունքը կարեւոր չէր, քանի որ յուրաքանչյուր հանդիպման ժամանակ էլ ձգտում ենք հաղթանակի: Հաջողության չհասանք, քանի որ հավաքականի ֆուտբոլիստները ներկա փուլում նախապատրաստական շրջանում են, շատերի մոտ խաղային պրակտիկայի պակաս է զգացվում: Թերեւս բացառություն է Հենրիխ Մխիթարյանը: Մենք ավելի շատ էինք տիրում գնդակին, սակայն վտանգավոր պահերով խաղը հավասար էր: 1-1 հաշվի ժամանակ 2 թիմերն էլ կարող էին հաղթել՝ ունենալով գոլային մի քանի պահեր: Մենք խաղացինք մեր հնարավորությունների 50 տոկոսով: Ինչ վերաբերում է նորեկներին, ապա այն, ինչ մեզ հետաքրքրում էր նրանց խաղում, տեսանք: Նաեւ փորձարկումներ կատարեցինք խաղային մի քանի դիրքերում, որոնք մեզ անհանգստացնում էին որակազրկված ֆուտբոլիստներ ունենալու պատճառով:

**Լուկ Հոլց** (Լյուքսեմբուրգ) - Գոհ եմ այս խաղից: Խաղից առաջ վնասվածք ստացած 4 ֆուտբոլիստներ ունեինք: Լյուքսեմբուրգի առաջնությունը, որը սիրողական մակարդակ ունի, դեռ չի վերսկսվել, ուստի մտավախություն կար, որ ֆուտբոլիստներն ամբողջությամբ պատրաստ չեն լինի հանդիպմանը: Սակայն ամեն ինչ լավ ընթացավ, նույնիսկ կարող էինք 2-րդ գնդակը խփել ու հաղթել, բայց չստացվեց: Խաղադաշտի վատ որակն ավելի ձեռնտու էր մեզ, քանի որ Հայաստանը տեխնիկապես լավ էր պատրաստված: Ուստի մրցակցի ֆուտբոլիստների համար նման խաղադաշտում խաղալն ավելի դժվար էր: Մրցակցի կազմում հանդես էին գալիս լավ պատրաստված այնպիսի խաղացողներ, ինչպիսին Մխիթարյանն է:

Մենք նախկինում հանդիպել ենք Վրաստանի հավաքականի հետ, առաջիկայում էլ կմրցենք ադրբեջանցիների հետ: Կարծում եմ, որ Հայաստանի հավաքականն ավելի ուժեղ է:

ՇԱԽՄԱՏ

# Հայրապետյանն ու Ղարագյոզյանը կես միավոր են զիջում առաջատարներին

**Մոսկվայում ընթացող շախմատային փառատոնի 4-րդ տուրից հետո A խմբում հանդես եկող հայաստանցի շախմատիստներից լավագույն արդյունքն ունի 3,5 միավոր վաստակած Հովիկ Հայրապետյանը: Նա ընդամենը կես միավորով է հետ մնում մրցաշարի առաջատարներ Ռաուֆ Մամեդովից, Իլդար Իբրահիմովից, Պավել Պոնկրատովից եւ Ադհիբանից: 4-րդ տուրում հայ շախմատիստը պարտության մատնեց Ֆարուկ Ամոնատովին:**

**Նույն խմբի մրցաշարին մասնակցող Հովհաննես Գաբուզյանը, Ռոբերտ Աղասարյանը, Տիգրան Սիմոնյանը եւ Մանուել Պետրոսյանը վաստակել են 2,5-ական միավոր: 2 միավոր ունի Արման Միքայելյանը, 1,5-ական՝ Դավիթ Շահինյանն ու Դավիթ Պետրոսյանը, իսկ Դավիթ Գեւորգյանի օգտին 1 միավոր է գրանցված:**

**Կանանց մրցաշարին մասնակցող Լիլիթ Գալոյանը ոչ-ոքի խաղաց Աննա Գվանցելաձեի հետ ու վաստակեց 3 միավոր: 4-ական միավորով առաջատարներն են Եվգենիա Օվոդը, Մարինա Ռոմանկոն, Լանիտա Ստեցկոն եւ Լիդիա Տոմնիկովան:**

**C խմբի մրցաշարում 3-րդ անընդմեջ հաղթանակը տոնեց Արթուր Ղարագյոզյանը, որի մրցակիցը Ալեքսեյ Սորոկինն էր: Հայ շախմատիստը վաստակեց 3,5 միավոր ու մոտեցավ աղյուսակը 4 միավորով գլխավորող 10 առաջատարներին: 3-ական միավոր ունեն Վահագն Խաչատրյանն ու Առնոլդ Մինասյանը: Տիգրան Ազարյանն ունի 2,5 միավոր, Հարություն Բարսեղյանը՝ 2:**

**F խմբի մրցաշարում Հայաստանը ներկայացնող Ռոբերտ Հովհաննիսյանին առայժմ չի հաջողվում վայելել հաղթանակի բերկրանքը: Նա 2-րդ անընդմեջ ոչ-ոքին գրանցեց իր օգտին՝ հաշտություն կնքելով Ալեքսեյ Ռեշյոտնիկովի հետ: Հովհաննիսյանը 4 հնարավորից վաստակել է 1 միավոր: 3-ական միավորով առաջատարներն են Ուրի Ելիսեեւը, Բուրակ Ֆիրատը եւ Վլադիմիր Բելոուսը:**

# «Արարատը» մարզումները կշարունակի Բաթումում

Երեկ առավոտյան «Արարատը» մեկնեց Բաթում, որտեղ կանցկացնի ուսումնամարզական 2-րդ հավաքը: Բաթումում թիմը ստուգողական մի քանի հանդիպում կանցկացնի:

Իսկ մինչեւ Բաթում մեկնելն «Արարատը» Մասիսի խաղադաշտում ուժերը չափեց նորաստեղծ «Ուրարտուի» հետ: Հաշիվը բացեց տեւական ժամանակից հետո կրկին «Արարատի» մարզաշապիկը կրող Գալուստ Պետրոսյանը: Հետագայում 2 անգամ աչքի ընկավ Գեւորգ Նռանյանը՝ խոշոր հաշվով հաղթանակ պարգեւելով իր թիմին:

# «Իմպուլսը» հաղթեց չեմպիոնին

Ավանի ֆուտբոլի ակադեմիայի խաղադաշտում ստուգողական խաղ անցկացրին Դիլիջանի «Իմպուլսն» ու երկրի չեմպիոն «Ուլիսը»: 2-1 հաշվով հաղթեց «Իմպուլսը», որի կազմում գոլերի հեղինակներ դարձան Դիեգո Կաստրոն ու Ռուսլան Հովսեփյանը: «Ուլիսից» Դավիթ Գրիգորյանը խաղավարտից 8 րոպե առաջ կրճատեց հաշվի տարբերությունը:

# Կլիչկոն հրաժարվեց Սոլիսի հետ մենամարտից



Գերծանրքաշային կարգում IBF-ի, IBO-ի, WBA-ի եւ WBO-ի վարկածներով աշխարհի ներկայիս չեմպիոն Վլադիմիր Կլիչկոն ապրիլի 6-ին Հաննովերում պետք է WBA-ի վարկածով չեմպիոնական գոտու կամավոր պաշտպանություն իրականացնի: Սակայն մրցակիցն առայժմ անհայտ է:

Այն բանից հետո, երբ WBA-ի ղեկավարությունն Ալեքսանդր Պովետկինի հետ մենամարտից առաջ թույլատրեց Կլիչկոյին տիտղոսի կամավոր պաշտպանություն իրականացնել, ուկրաինացի բռնցքամարտիկի հավանական մրցակից էր համարվում Աթենքի օլիմպիադայի չեմպիոն, կուբացի Օդլանիեր Սոլիսը: Պրոֆեսիոնալ բռնցքամարտիկի կարիերայի ընթացքում Սոլիսը միայն մեկ պարտություն էր կրել՝ 2011-ի մարտին նոկաուտի ենթարկվելով Վիտալի Կլիչկոյի հետ մենամարտում:

2 բռնցքամարտիկների պրոմոութերները նստեցին բանակցությունների սեղանի շուրջը: Գրեթե բոլոր հարցերը համաձայնեցվել էին, սակայն վերջին պահին Կլիչկոյի ներկայացուցիչները հրաժարվեցին մենամարտի անցկացումից: Ամենայն հավանականությամբ Կլիչկոն կմենամարտի 39-ամյա ամերիկացի բռնցքամարտիկ Ֆրես Օկենդոյի հետ:

Սոլիսի պրոմոութեր Ահմեդ Օները նշել է, որ Կլիչկոն բնավ էլ չէր ցանկանում մենամարտել կուբացու հետ: Ըստ նրա, ուկրաինացի բռնցքամարտիկը պարզապես գովազդային նպատակներով օգտագործեց Սոլիսին՝ ցույց տալու համար, որ նրանից չի վախենում:

*Էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

# Արմսթրոնգը չի վերադարձնի 12 մլն դոլար պարգեւավճարը

Դոպինգի օգտագործման համար ցմահ որակազրկված «Տուր դը Ֆրանս» բազմօրյա հեծանվավազքի 7-ակի հաղթող Լենս Արմսթրոնգը հրաժարվել է վերադարձնել այդ հաղթանակների համար ստացած 12 մլն դոլար պարգեւավճարը: Ամերիկացի հեծանվորդի փաստաբան Անդրե Բիրոտը հայտարարել է, որ որակազրկված մարզիկները երբեք չեն վերադարձնում պարգեւավճարները: Նրանք պարտավոր են վերադարձնել միայն նվաճած մեդալները:

Հիշեցնենք, որ Լենս Արմսթրոնգն իր տիտղոսներից զրկվել էր 2012-ի հոկտեմբերին, երբ ԱՄՆ-ի հակադոպինգային գործակալությունն անհերքելի փաստերի միջոցով ապացուցել էր, որ անվանի հեծանվորդը տարիներ շարունակ դոպինգ է օգտագործել: Վերջերս Լենս Արմսթրոնգն էլ ի վերջո խոստովանել է, որ իրոք դոպինգ է օգտագործել: Ըստ նրա, առանց դոպինգի «Տուր դը Ֆրանսում» հաղթելն անհնար է:



ԱԶԳ **Օրվա հետքերով**

# Ինչպես է փոխվել անշարժ գույքի շուկան 2012-ի ընթացքում

## *Գործարքները նվազել են, գները՝ չնչին աճ արձանագրել*

*1-ին էջից*

Բնակարանների շուկայական միջին գները Երեւանում 2012-ին 2011-ի համեմատ մնացել են անփոփոխ: Ըստ վարչական շրջանների, Երեւանում բնակարանների 1 քմ մակերեսի միջին շուկայական գները այսպիսին են եղել.

| Վարչական շրջաններ | Միջին գները (դրամ) | |
|---|---|---|
| | 2011 թ. | 2012 թ. |
| Կենտրոն | 441200 | 411900 |
| Արաբկիր | 343800 | 341300 |
| Քանաքեռ-Զեյթուն | 266000 | 268900 |
| Նոր Նորք | 226600 | 232300 |
| Ավան | 238400 | 241600 |
| Էրեբունի | 234000 | 237700 |
| Շենգավիթ | 230700 | 237900 |
| Դավթաշեն | 257500 | 261800 |
| Աջափնյակ | 224500 | 229300 |
| Մալաթիա-Սեբաստիա | 222600 | 227000 |
| Նուբարաշեն | 146200 | 141100 |
| Միջինը Երեւանում (բացի Նորք-Մարաշից) | 257400 | 257300 |

Մարզերում, բացառությամբ Երեւանի, 2012-ին վաճառվել են 4326 բնակարաններ, որոնց քանակը 2011-ի համեմատ աճել է 4,2 տոկոսով, իսկ միջին գները՝ 3,5 տոկոսով:

Երեւանից հետո, ամենաթանկ բնակարանները 2012-ին եղել են Ծաղկաձորում, որտեղ 1 քմ մակերեսի շուկայական գինը կազմել է ավելի քան 293 հազար դրամ: Վաղարշապատում (Էջմիածնում) եւ Աբովյանում 1 քմ գինը 151 հազար դրամ է: Ապա գալիս են Նոր Հաճընը՝ 128 հազար դրամ, Գորիսը՝ 115 հազար դրամ, Իջեւանը՝ 113 հազար դրամ, Աշտարակը՝ 111 հազար դրամ, Մասիսը՝ 108 հազար դրամ 1 քմ դիմաց ցուցանիշներով:

2012-ին Հայաստանում գրանցվել է անհատական տների առուվաճառքի 4970 գործարք, որից 1424-ը՝ Երեւանում: Մայրաքաղաքում անհատական տների առուվաճառքի գործարքների քանակը 2011-ի համեմատ աճել է 7,7 տոկոսով, իսկ մարզերում՝ նվազել 6,7 տոկոսով:

Միջինացված՝ 250 քմ շինության մակերես եւ 400 քմ տնամերձ ունեցող անհատական տների 1 քմ-ի միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը) 2012-ին 2011-ի համեմատ աճել են 0,4 տոկոսով: Ըստ Երեւանի վարչական շրջանների, գներն այսպիսին են եղել.

| Վարչական շրջաններ | Միջին գները (դրամ) | |
|---|---|---|
| | 2011 թ. | 2012 թ. |
| Կենտրոն | 462600 | 463600 |
| Արաբկիր | 372700 | 370200 |
| Քանաքեռ-Զեյթուն | 277600 | 280800 |
| Նորք-Մարաշ | 287900 | 306900 |
| Ավան | 246500 | 258600 |
| Էրեբունի | 238100 | 227300 |
| Շենգավիթ | 241300 | 244700 |
| Դավթաշեն | 269600 | 263200 |
| Աջափնյակ | 237300 | 239300 |
| Մալաթիա-Սեբաստիա | 231700 | 226900 |
| Նուբարաշեն | 148800 | 145000 |
| Միջինը Երեւանում (բացի Նոր Նորքից) | 274000 | 257100 |

Մարզերում միջինացված են 200 քմ շինության եւ 1000 քմ տնամերձ մակերեսով անհատական տների գները: Այստեղ միջին գները 2012-ին 2011-ի համեմատ աճել են 0,7 տոկոսով: Ամենաթանկ անհատական տները դարձյալ Ծաղկաձորում են՝ 1 քմ-ն՝ 304 հազար դրամ: Երկրորդը Աբովյանն է, որտեղ 1 քմ-ն կազմել է 151 հազար դրամ, երրորդը Վաղարշապատն է. 1 քմ-ն՝ 150 հազար դրամ: Ապա գալիս են Աշտարակը՝ 132 հազար դրամ, Նոր Հաճընը՝ 129 հազար դրամ, Գորիսը՝ 127 հազար դրամ, Իջեւանը՝ 120 հազար դրամ, Եղվարդը՝ 115 հազար դրամ 1 քմ դիմաց:

Հողի շուկայում հետեւյալ պատկերն է՝ 2012-ին 2011-ի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 5,5 տոկոսով, աճուրդով վաճառքներինը՝ 26,2 տոկոսով: Ընդ որում, Երեւանում աճել է 44 տոկոսով, իսկ մարզերում միասին վերցրած նվազել 28 տոկոսով:

2012-ին իրականացվել են հիփոթեքային գրավադրման 1508 գործարքներ, որից 959՝ Երեւանում: Հիփոթեքային գրավադրման գործարքներից 82,8 տոկոսն իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 11,7 տոկոսը՝ անհատական բնակելի տների, մնացածը հասարակական նշանակության օբյեկտների, այգետնակների եւ հողերի նկատմամբ: 2011-ի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը նվազել է 30,3 տոկոսով, ընդ որում Երեւանում՝ 40,6 տոկոսով, իսկ մարզերում՝ 0,4 տոկոսով:

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ անցյալ տարի անշարժ գույքի շուկայում էական տեղաշարժեր չեղան: Գործարքների ընդհանուր քանակը 2012-ին նվազեց, իսկ գները գրեթե անփոփոխ մնացին՝ միայն չնչին աճ արձանագրելով:

# ՎիվաՍել-ՄՏՍ-ն խոշոր հարկատուների ցանկում զբաղեցնում է երրորդ տեղը

## *2012-ին ՎիվաՍել-ՄՏՍ-ի պետական բյուջե վճարած հարկերը 22 տոկոսով գերազանցում են 2011 թվականի ցուցանիշը*

2012 թվականին հեռահաղորդակցության առաջատար օպերատոր ՎիվաՍել-ՄՏՍ ընկերությունը («Կ-Տելեկոմ») պետական բյուջե է փոխանցել 21,672,938,130 ՀՀ դրամ (21,7 մլրդ ՀՀ դրամ)՝ 2012-ի խոշոր հարկատուների ցանկում զբաղեցնելով երրորդ տեղը:

Թեեւ 2011-ին խոշոր հարկատուների ցանկում ՎիվաՍել-ՄՏՍ-ն նույնպես զբաղեցնում էր երրորդ տեղը (2011-ին հարկային վճարները կազմել են 17,751,611,850 ՀՀ դրամ/17,7 մլրդ ՀՀ դրամ), 2012թ.-ին ընկերությունը նախորդ տարվա իր ցուցանիշը գերազանցել է 22 տոկոսով:

2011-ի համեմատ՝ 2012-ին ՎիվաՍել-ՄՏՍ-ի հարկային վճարների ավելացումը հիմնականում պայմանավորված է ընկերության կողմից փոխանցված ուղղակի հարկերի (շահութահարկ եւ եկամտահարկ) ծավալների աճով:

Ընդհանուր առմամբ, 2005-ից ի վեր, երբ ՎիվաՍել-ՄՏՍ-ն մուտք գործեց հայաստանյան շուկա, ընկերությունը պետական բյուջե է փոխանցել 126,944,110,870 ՀՀ դրամ (126,9 մլրդ ՀՀ դրամ):

Ընկերությունը որդեգրել է թափանցիկ գործելակերպ, սոցիալական պատասխանատվություն եւ հարգանք օրենքի հանդեպ, ինչը նաեւ դրսեւորվում է հարկային պարտավորությունների անթերի կատարմամբ:

**ՎիվաՍել-ՄՏՍ («Կ-Տելեկոմ» ՓԲԸ)**

| Տարի | Ցանկում զբաղեցրած տեղը | Գումար (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| 2005 | 15 | 2,277,059,000 |
| 2006 | 4 | 9,412,008,770 |
| 2007 | 4 | 15,490,490,700 |
| 2008 | 1 | 30,796,438,500 |
| 2009 | 3 | 15,916,172,700 |
| 2010 | 4 | 13,627,391,220 |
| 2011 | 3 | 17,751,611,850 |
| 2012 | 3 | 21,672,938,130 |
| | | 126,944,110,870 |

**ՏԻԵԶԵՐՔ**

# Մոլորակիկը կմոտենա, բայց չի բախվի Երկրին

ԵՐԵՎԱՆ, 6 ՓԵՏՐՎԱՐԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ընդամենը 45 մետր տրամագծով 2012DA14 կոդային անվանումը կրող փոքր մոլորակը փետրվարի 15-ի լույս 16-ի գիշերը Երկրից կգտնվի այդ երկնային մարմինների շարժման դիտարկումների ողջ պատմության ընթացքում ամենամոտ հեռավորության վրա: Սակայն, ինչպես փետրվարի 6-ին հաղորդել է Ճապոնիայի Ազգային աստղադիտարանը, դրա հետ բախման սպառնալիք չկա, տեղեկացնում է «Արմենպրես»-ը:

Մոտավորապես 130 հազար տոննա քաշով մոլորակը շարժվում է վայրկյանում 8 կիլոմետր արագությամբ եւ առավելագույն չափով Երկրին կմոտենա փետրվարի 15-ին Երեւանի ժամանակով 23:24-ին Հնդկական օվկիանոսի երկնքում գտնվող կետում: Երկրից այդ մոլորակի հեռավորությունը կլինի ընդամենը 27,7 հազար կիլոմետր:

## ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

«Ֆլորես» Աճուրդի Տուն ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «Ակսոն» ԱՀ Բորսայի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ընթացքում վաճառվելու է հետեւյալ լոտը՝

«Ամերիաբանկ» ՓԲԸ-ին օտարման իրավունքով պատկանող՝

- ՀՀ, ք. Երեւան, Կենտրոն համայնք, Տերյան փողոց, 19 շենք, թիվ 28, 29 հասցեում գտնվող անշարժ գույք՝ բաղկացած՝ 106,5 ք.մ. մակերեսով բնակարանից եւ 104,5 ք.մ. մակերեսով ձեղնահարկից: Լոտի մեկնարկային գինը՝ 128000000 (մեկ հարյուր քսանութ միլիոն) ՀՀ դրամ: Լոտի նկատմամբ սահմանափակումները՝ գույքը գրավադրված է:

Աճուրդը՝ հոլանդական եղանակով, «բաց» ընթացակարգով՝ ք.Երեւան, Ագաթանգեղոսի 6/1 հասցեում 25.02.2013 թ.-ին, ժ. 12:00-ին եւ այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր նույն ժամին: Աճուրդի ավարտը 01.09.2013թ: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է գույքի մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետներն են յուրաքանչյուր աճուրդային փուլի օրվանը նախորդող աշխատանքային օրվա ժամը 16.00: Նախավճարը վճարվում է «Ֆլորես» ԱՏ ՍՊԸ-ի դրամարկղում կամ բանկային հաշվին («Ամերիաբանկ» ՓԲԸ-ում 1570005285290100 հաշվեհամարին): Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը: Լոտն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեով եւ ծանոթանալ լոտի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի հետ: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդի անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք.Երեւան, Ագաթանգեղոսի 6/1 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (010) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.flores.am, www.akson.am կայքերը:

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկն իր դրամագիտական հավաքածուն համալրելու նպատակով գնում է ֆիզիկական եւ իրավաբանական անձանցից հին ու նոր դրամանիշեր՝ մետաղադրամներ եւ թղթադրամներ, որոնք տարբեր ժամանակահատվածներում շրջանառության մեջ են եղել պատմական Հայաստանի տարածքում:

Դրամանիշերի գնման նպատակով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում ստեղծված է «Դրամանիշերի փորձաքննության եւ գնահատման հանձնաժողով», որն իր գործունեությունն իրականացնում է ՀՀ կենտրոնական բանկի շենքում յուրաքանչյուր երկուշաբթի ժամը 10:00 մինչեւ 13:00:

Տեղեկությունների համար զանգահարել հետեւյալ հեռախոսահամարներով՝ 59-29-03, 56-16-55:

***ԿԲ հասարակայնության հետ կապերի ծառայություն***

# Հարգելի գործարարներ,

Երեւանում գրանցված կազմակերպությունները կարող են Նույնականացման քարտ կարդացող էլեկտրոնային սարքերը ձեռք բերել նաեւ Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կենտրոնական գրասենյակից՝ Միեր Մկրտչյան 5ա հասցեում, ամեն օր, ժամը 9:30-17-30: Սարքը ձեռք բերելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը տեղադրված է www.gitem.am կայքի «Նորություններ» բաժնում:

Հարգանքով՝

***Հայաստանի ՓՄՁ զարգացման ազգային կենտրոն***




ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 04 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան 6.2.2013, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: